Գազայի ճանապարհով. ինչպէս ուրիշ տեղեր, հոս ալ հաստատուած էր եկեղեցի և վանք՝ Հոգետուն անունով, ուր ուխտաւորները կ'իջեւանէին և հանգըստանալէ յետոյ կը հասնէին Երուսաղէմ։ Այժմ եկեղեցին ու վանքը գոյութիւն չունին, միայն անոնց տեղը կը մնայ և կը կոչուի Հազուրէդ էլ–Մէլէֆ (Հըրեշտակաց արտ) և տեղացի բարեպաշտ կիներ իրենց հիւանդ փոքրիկ մանուկները հոն կը տանին, ջուրով կը լուան, և կը պատմեն թէ կը բժշկուին անոնք։ (Գազայի Ս. Հրեշտակապետաց վանքին ու եկեղեցիին պատմութիւնն ու նկարագրութիւնը տեսնել Հ. Վ. Ե. էջ 403–412)։

Հրաշալի անձրեւին աւանդութիւնը Գազայի մէջ. — Հրաշալի անձրեւին այս դէպքը պատահած է 396 թըւականին Ս. Պորփիւրի օրով, և որ կը պատկերացնէ հեթանոսութեան և քրիստոնէութեան ընդդիմամարտ վիճակը եւ վերջնոյս յաղթանակը. պատկերացումը կուտայ Ս. Պորփիւրի կենսագիր Մարկոս սարկաւագ.

«Գազայի հեթանոսները գէշ ընդունելութիւն մը ըրին Ս. Պորփիւրին՝ որ տեղւոյն քրիստոնեաներուն համար Կեսարիոյ մէջ եպիսկոպոս ձեռնադրուելով հոն կը հասնէր։ Այս գէշ ընդունելութեան ժամանակ Գազայի մէջ կը տիրէր բացառիկ երաշտութիւն մը։ 3 Յունվար 396 թուականն էր և ձմրան սկզբնաւորութենէն ի վեր կաթիլ մը անձրեւ չէր եկած։ Պաղեստինցիներուն համար ամենէն ահռելի պատուհասն էր աս. երկրագործութիւն չկար, ըմպելի ջուրը կը պակսէր, անասունները խոտի համար կը տառապէին, որովհետեւ խոտը արմատէն չորցած էր։ Գազայի բնակիչները սովէն սարսափած Մառնայի սեղանին վրայ